Երիտասարդ Պատմագետների Ասոցիացիա ՀԿ

Edu Armenia նախաձեռնություն

Ուսուցիչների պետական պարտադիր վերապատրաստման դասընթաց 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա ՝ **ԻՆՉՊԵՍ ՁԵՎԱՎՈՐԵԼ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ՝ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Հետազոտող ուսուցիչ՝ **ՌԱԶՄԻԿ ԳԵՎՈՐԳԻ ՄՆՈՅԱՆ**

«Երևանի պարարվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներածություն ---------- էջ 2

ԳԼՈՒԽ I

Սովորողների կրթական, դաստիարակչական կամ
արժեքային և ընդհանուր զարգացման հիմնախնդիրները ---------- էջ 5

ԳԼՈՒԽ II

Պատմություն առարկայի դասավանդման մեթոդները ---------- էջ 12

ԳԼՈՒԽ III

Սովորողների մոտ ինքնուրույնություն, նախաձեռնություն
և ստեղծագործական ունակությունների զարգացումը պատմություն
առարկայի դասավանդման ընթացքում ---------- էջ 15

Եզրակացություն ---------- էջ 17

Գրականության ցանկ ---------- էջ 18

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Պատմությունը կարևոր դեր է խաղում հասարակական դաստիարակության մեջ: Բոլոր ժամանակներում՝ սկսած անտիկ շրջանից, պատմությանը դիմել են գրականության և արվեստի գործիչները: Նրանց լավագույն ստեղծագործությունները ոգեշնչված են եղել պատմության օրինակներով: Անցյալի փորձը, որն ամրագրված է ժողովրդի հասարակական հիշողության մեջ, ունի բարձրագույն արժեք և համապատասխան պայմաններում կարող է վերածվել իրական քաղաքական ուժի: Պատահական չէ, որ ժողովուրդների կյանքի շրջադարձային փուլերում մեծանում է նրանց հետաքրքրությունը պատմության նկատմամբ:

Պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալիս իրականացնելու մեր ազգային իդեալը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը:

Պատմության ուսուցման գործընթացում են լուծվում սովորողների կրթական, արժեքային, դաստիարակչական և ընդհանուր զարգացման խնդիրները: Հարկ է նշել, որ արժեհամակարգը մարդու բարոյական, հոգևոր իմացական, գեղագիտական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Շատ կարևոր է, որ մեր երկրում կրթության հենքը և գլխավոր իմաստը դառնա սովորողների արժեքային համակարգի ձևավորումը:

Մարդու անձի ձևավորումն ու զարգացումը տեղի է ունենում գործունեության տարաբնույթ ձևերով, դրա համար էլ արժեքային համակարգի՝ որպես անձի սոցիալ-բարոյական ուղղվածության անբաժանելի մասի, ձևավորումն իրականացվում է մանկավարժների կողմից՝ օգտագործելով ուսումնադաստիարակչական աշխատանքի տարբեր մեթոդներ, միջոցներ և ձևեր:

Ազգային արժեհամակարգով երիտասարդ սերնդի ձևավորման գործում կարևոր դեր է խաղում հատկապես հայրենասիրական դաստիարակությունը, որով սերմանվում է հայրենիքի հանդեպ սեր և նվիրվածություն, երկրի առաջընթացին սեփական ջանքերով նպաստելու ձգտում:

Դպրոցում պատմություն առարկայի դասավանդման մակարդակում սովորողների արժեքային համակարգի ձևավորման և հոգևոր-բարոյական դաստիարակության նպատակն է ստեղծագործ, բանիմաց, բարձր բարոյական ՀՀ քաղաքացու ձևավորմանը և զարգացմանը նպաստելը: Ազգային գիտակցությամբ օժտված, համակողմանի զարգացած, լիարժեք դաստիարակություն ստացած, համամարդկային արժեքներով առաջնորդվող ազատ, գիտակից քաղաքացի մարմնավորելը:

Այդ նպատակն իրականացնելու համար՝ սովորողներին փոխանցելով պատմություն առարկայի կարևորության գիտակցումը, անհրաժեշտ է լուծել կրթադաստիարակչական մի շարք կարևոր խնդիրներ:

Դեռևս չունենալով կայացած արժեհամակարգ, սովորողն առավել հակված է ընդօրինակելու շրջապատին: Ուստի այս առումով մեծ է զանգվածային տեղեկատվական միջոցների դերը, որոնցում ներկայացվող ոչ ճիշտ հայերենը, ցածրաճաշակ երաժշտությունը, խաթարված մտածելակերպը, սոցիալական կայքերում հակասոցիալական ու հակազգային արժեքներ քարոզող նյութերն իրենց բացասական ազդեցությունն են ունենում երեխայի արժեհամակարգի ձևավորման վրա: Ծնողները, խրախուսելով կամ հանդիմանելով, ամրապնդում կամ կասեցնում են տվյալ վարքի և արժեքային պատկերացումների ձևավորումը: Արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործընթացում, ընտանիքից բացի, դպրոցն է այն հիմնական վայրը, որտեղ կոփվում է ապագա քաղաքացու բնավորությունը, ձևավորվում է բարոյական նկարագիրը, աշխարհայացքը:

Ուստի ուսուցչի մանկավարժական կոմպետենտությունը, մարդկային և բարոյական կերպարը, քաղաքացիական դիրքորոշումը, մտահորիզոնը, լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են:

Խնդիրները լուծելու համար պետք է սովորողներին զինել գիտելիքներով, նրանց հաղորդակից դարձնել հասարակական, հոգևոր-բարոյական, ազգային և համամարդկային արժեքներին, սովորողների մեջ սերմանել ազգային գիտակցություն, զգացմունքների դաստիարակություն՝ որն անքակտելիորեն կապված է նրանց մտածողության, հիշողության զարգացման, երևակայության հետ, զարգացնել ներկայացվող նյութի վերաբերյալ ունեցած տեսական գիտելիքների յուրացում և համակարգում, անցյալի իրադարձությունները իրենց փոխկապակցվածության մեջ ըմբռնելու և գնահատելու կարողություն:

Սովորողների արժեքային կողմնորոշման խնդրի լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային հարաբերությունների միջոցով աշակերտների մեջ պետք է ձևավորի ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի հետաքրքրություն:

Թեմայի հետազոտությունը՝ հնարավորություն է ընձեռում նորովի ընկալել պատմության դասավանդման գործընթացում գոյություն ունեցող հիմնախնդիրների լուծման հրատապությունը: Առարկայի դասավանդման արդիականությունը կայանում է ստորև բերված դիտարկումների հիմնավորմամբ: Ազգի հիմքը կրթությունն է: Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է:

Պատմություն առական համարվում է անցյալի և ներկայի անբաժանելի կապ, կենդանի օրգանիզմ, որի ուսումնասիրությունը, փաստերի և ռեսուրսների հավաքագրումը հանդիսանում է արդի գիտահետազոտական, ճանաչողական և ուսումնադաստի-արակչական կարևորոգույն գործառույթներից մեկը սովորողների ընդհանուր արժեհամակարգում, սոցիալ-մշակութային տարրերի ամբողջականություն, որն անհրաժեշտ է պահպանել և ներկայացնել գալիք սերունդներին:

Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Ուստի այս տեսանկյունից դիտարկելիս կարևոր է անհատ-քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը: Ներկայացվող թեմայի գիտական ուսումնասիրությամբ ամբողջանում է պատմություն առարկայի դասավանդման գործընթացում սովորողների արժեհամակարգի ձևավորման ընդհանուր պատկերը:

ԳԼՈՒԽ I

Սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման հիմնախնդիրները

Յուրաքանչյուր ժողովրդի պատմություն նրա անցած ուղին է, նրա կենսագրությունն ու հիշողությունը, դարերի ընթացքում նրա կերտած հոգևոր և նյութական արժեքների ամբողջությունը: Պատմության ուսումնասիրումը հիմք է յուրաքանչյուր քաղաքացու, հասարակության և պետության ապագա գործունեության:

Մարդկության զարգացման ներկա փուլում, երբ առկա են սոցիալ-քաղաքական, սոցիալ-տնտեսական, աննախադեպ իրողություններ, սովորողների արժեհամակարգի ձևավորման, պահպանման և ամրակայման հիմնախնդիրները դառնում են օրակարգային:

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մոտ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ նաև ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում:

Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակաչական առումով հիմնական գաղափարները, հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում պատմության առարկայի ծրագրի յուրացման միջոցով աշակերտի մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք [1]:

Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունի ուսուցանվող պատմություն առարկան, որը հնարավորություն է տալիս կազմակերպել աշակերտների իմացական գործունեությունը՝ ապահովելով նրանց հասարակական գիտակցության զարգացումը, ձևավորել դպրոցականների արժեքային կողմնորոշումները, գաղափար տալ քաղաքակրթության առանձնահատկությունների, հայ մշակույթի մասին, ճանաչելի դարձնել Հայաստան աշխարհն ու հայրենի բնօրրանը, դաստիարակել հայրենասիրություն, հայրենիքին անձնազոհ նվիրվելու, այն կյանքի գնով պաշտպանելու կամք ու վճռականություն: Ճանաչելու և գնահատելու մեր և այլոց հոգևոր

---

[1] Փարեմուզյան Ի., «Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում», էջ 397:

արժեքները, սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ:

Պատմություն առարկայի դասավանդումը հանրակրթական դպրոցում դուրս է գալիս ուսուցանելու նեղ շրջանակից՝ վերածվելով սովորողների բարոյական, քաղաքական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, հարստացնում է սովորողների հոգևոր պաշարները և հղկում գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության և ընդգրկունության առումով:

Անցյալի փորձը ուսումնասիրելը մեզ օգնում է իմաստավորելու ներկան և կանխատեսելու ապագան: Պատմական գիտելիքներն ավելի ակտիվ թափանցելով հասարակական կյանքի մեջ, ընդլայնվում են դրանց գործունեության ոլորտները, հետազոտության օբյեկտները [2]:

Պատմական գիտության գործառույթները պայմանավորված են ժամանակակից իրականության վրա պատմական փորձի, պատմական գիտելիքների ազդեցությամբ: Հենց դրանց համախմբությամբ էլ որոշվում է պատմական գիտության արժեքը, այն, թե որքան է դրա սոցիալական պահանջվածությունը և ինչքանով են դրա միջոցով լուծվում հասարակության առջև ծառացած հիմնախնդիրները:

Իհարկե, մարդկանց կողմից իրենց անցյալով հետաքրքրվելն ամբողջապես պայմանավորված չէ միայն դրա հասարակական ազդակներով: Պատմության նկատմամբ հետաքրքրությունը կարող է պայմանավորված լինել նաև զուտ գիտականության պահանջով, անցյալի իրողությունները ճանաչելու ձգտմամբ, դրանք վեր հանելու, այսինքն՝ ճշմարտության բացահայտման մղումով:

Հայոց պատմությունը կազմում է համաշխարհային պատմության մի օղակը: Ուստի այն պետք է ուսումնասիրվի ընհանուր պատմության հետ միասնության մեջ:

Այդ միասնությունը կարելի է ապահովել.

1. միևնույն դարաշրջանի պատմական դեպքերի ու երևույթների համաժամանակյա ուսուցման միջոցով,
2. ընդհանուր պատմական հասկացությունների և գաղափարական յուրացման միջոցով,
3. ներառարկայական կապերի մշատական իրականացման միջոցով:

«Հայոց պատմություն» առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորվում է պետականամետ մտածելակերպ ունեցող, հայոց ազգային և համամարդկային արժեքային համակարգը կրող, հայ ժողովրդի և հայոց պետականության դերը համաշխարհային պատմության համատեքստում պատկերացնող, ազգային դիմագիծ ունեցող, պատասխանատու քաղաքացի:

---

[2] Ղուկասյան Ա., «Հայոց պատմությունը 8-9-րդ դասարաններում», 2013, էջ 9:

Հայոց պատմությունը բովանդակում է դաստիարակչական վիթխարի ներուժ, հայրենասիրություն և ազգային արժանապատիվ գոյություն: Հայոց պատմության իմացությունը հնարավորություն կտա Հայաստանի Հանրապետության ապագա քաղաքացուն ուսումնառության ընթացքում ձեռք բերած փորձը, հայոց քաղաքակրթության դարավոր ավանդույթները, անցյալի դասերը, գիտելիքներն ու ճանաչողական հմտությունները լավագույնս ծառայեցնել հզորացման և բարգավաճման ուղին բռնած Հայաստանի անկախ պետությանը, պատկերացում կազմել համաշխարհային պատմության մեջ Հայաստանի ու հայ ժողովրդի զբաղեցրած տեղի ու դերի մասին:

Հայոց պատմության ծրագրի շրջանակներում սովորողները ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, նրա առաջացման ու զարգացման օրինաչափություններին, ձեռքբերումներին, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի ունեցած դժվարություններին ու կորուստներին:

Պատմության իմացության միջոցով է ձևավորվում ազգային ինքնագիտակցությունն ու մտածողությունը, պատասխանատու և սեփական տեսակետն ու դիրքորոշումը ունեցող, կշռադատված որոշումներ կայացնող, ազգային արժեհամակարգը կրող անձ [3]:

Պատմական երկու դասընթացների կապն ու հիմնական գծերի համեմատումը հնարավորություն է ստեղծում ձևավորելու գիտելիքների ամբողջական համակարգ:

Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում, նա առանձնացնում է ընդհանուր դաստիրակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, դասղեկական ժամ, խմբային, էքսկուրսիա, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիրակչական խնդիրների լուծումը [4]:

Ուսուցչի մասնագիտությունը հարգող մանկավարժները պետք է տիրապետեն մասնագիտական և մարդկային էթիկայի նորմերին, պատասխանատու լինեն աշակերտների կյանքի, վարքի, հոգեկան առողջության ու անձնային աճի համար, արժանապատվորեն կրեն այդ պատասխանատվությունը և պատրաստ լինեն իրենց սաների հետ համագործակցության:

«Ուսուցչի գաղափարապես աղքատ, կենսականորեն անբովանդակ, դժգույն կերպարը ծնում է անտարբերություն, ձանձրույթ, բարոյական չկողմնորոշվածություն, անհեռանկար

---

3 Մանասյան Ն., «Հանրակրթության արժեքային համակարգը», 2004, N1/2, էջ 10:

4 Бабанский Ю. К., “Функции осуществления комплексного подхода к воспитанию”, Москва, 1983, с. 111.

երեխայի ձևավորում, որից էլ դեպի կործանարար վարքագիծ, վատ ավանդույթի սաղմնավորում ընդամենը մեկ քայլ է»[5]:

Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրներ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցմամբ, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, բնավորության, զգացմունքների, կամքի, հոգեբանական տարբեր դրսևորումների, միաժամանակյա և փոխկապակցված մոտեցմամբ:

Հենց կրթության միջոցով է, որ ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին:

---

5 Кон И. С., “Психология старшекласника”, Москва, 1980, с. 132.

Իմ կողմից անցկացված պատմության դաս, որի ընթացքում աշակերտները քննարկել և վերլուծել են դասի թեման հիմնային արժեքներով:

«Հռոմում Մարկոս Յունիոս Բրուտոսի և Մարկոս Անտոնիոսի ելույթները Հուլիոս Կեսարի սպանությունից հետո» և ելույթներից բխող արժեքային հիմնավորումները:

Աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը պատմության դասին՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ

Դասի սկզբում կիրառվեց **շրջված դասարան մեթոդը**, որի միջոցով աշակերտները ծանոթացան տվյալ պատմական կերպարներին և այն ժամանակաշրջանին, որում նրանք ապրել և գործել են:

Դերային խաղ մեթոդի միջոցով աշակերտները դասի ընթացքում մարմնավորեցին դասի առանցքային կերպարներին՝ Մարկոս Յունիոս Բրուտոսին, Մարկոս Անտոնիոսին, Օգոստոս Օկտավիանոսին և այլն:

Խմբային աշխատանքի միջոցով դասի ընթացքում պատրաստվեց սահիկաշար, որում հիմնավոր կերպով ներկայացվեց դասի առանցքային կերպարների դրդապատճառները՝ դրանցից բխող գործողությունները:

Դասի ընթացքում աշակերտները ներկայացրեցին Հին Հռոմի արժեքային համակարգը I դարում՝ գրաֆիկական աղյուսակների միջոցով:

Բանավեճ մեթոդի կիրարմամբ, հիմք ընդունելով դասի թեման՝ քննարկվեց և վերլուծվեց հայրենասիրություն, ընկերասիրություն արժեքների համադրումը և հակադրումը:

Իմ կողմից անցկացված պատմության դասաժամին կիրառվեցին **դերային խաղ, շրջված դասարան և բանավեճ մեթոդները**: Խաղի մեջ ձեռք բերված գիտելիքները յուրաքանչյուր աշակերտի համար դառնում է զգայական, զգացմունքային: Այս զգացմունքները օգնում են նրանց ավելի խորը հասկանալու, ավելի լավ զգալու ուսումնասիրած դարաշրջանը և պատմական նշանավոր դեմքերին:

Դասի ընթացքում **դերային խաղ մեթոդը** խրախուսում է աշակերտներին վերլուծելու և կերտելու անցյալից եկած անձերի կերպարները: Իրենց կերպարին տալով մտքեր, զգացմունքներ, գործողություններ, այն հեռու է տանում աշակերտին իր ամենօրյա կերպարի պրակտիկայից:

«Դերային» խաղը, որպես դասավանդման մեթոդ ունի իր առավելությունները.

- ստեղծում է երեխայի ստեղծագործական զարգացման համար պայմաններ,
- խթանում է խորը գիտելիքները,
- կատարում է կրթական գործառույթ,
- դասին հետաքրքրության առաջացում (խթանող գործառույթ),
- զգացմունքային և գեղագիտական դաստիարակություն,
- ստեղծագուրծական-որոնողական աշխատանք,
- միավորում է ճանաչողական գործունեության հուզական, ռացիոնալ տեսակները,
- խթանում է ճանաչողական հետաքրքրությունները,
- ունի դաստիարակչական գործառույթ (նմանվել կերտած կերպարին, կամ չնմանվել):

Շրջված դասարան մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս որպեսզի աշակերտը դասարանում լինի և՛ սովորող, և՛ սովորեցնող: Աշակերտն ակտիվ դեր է խաղում ուսումնառության այս գործընթացում, որն էլ իր հերթին ամրապնդում է աշակերտի ինքնավարությունը:

Բանավեճ մեթոդն ուղղված է աշակերտի սեփական դիրքորոշում արտահայտելուն, կարծիքը պաշտպանելու կարողության ամրապնդմանը, որը թույլ է տալիս սովորողին ստեղծագործական մտածողությունը, մտքերը ազատ արտահայտելու հմտությունը զարգացնել, սովորողներին դրդում է առաջադրել վարկածներ և նրանց ներգրավում հակասությունների քննարկման բանավեճի մեջ:

Դասն առանձնանանում էր իր ամբողջականությամբ, դասի փուլերի ներքին փոխկապվածությամբ, ուսուցիչ-աշակերտ միասնական տրամաբանական գործունեությամբ:

Դասի ընթացքում կիրառվեց նաև միջառարկայական կապերի միջոցը՝ այսինքն այլ առարկաներից ստացած գիտելիքների օգտագործումը, որը հնարավորություն տվեց աշակերտների մոտ զարգացնել կրթական, դաստիարակչական և արժեքային համակարգի աստիճանը, ձևավորել հայրենակենտրոն արժեհամակարգ, զուգահեռաբար պատմական օրինակների վրա հենվելով աշակերտների մոտ ձևավորել ընկերասիրություն, մարդասիրություն, հասկանալ աշակերտների իմացական աշխարհընկալման աստիճանը:

Դասի ավարտից հետո աշակերտները վերլուծություններ և եզրակացություններ արեցին, քննարկման միջոցով նրանք դասից դուրս բերեցին և ընդգծեցին դասին առնչվող հիմնական և կարևոր արժեքները:

ԳԼՈՒԽ II

Պատմություն առարկայի դասավանդման մեթոդները

Պատմության առարկայի ժամանակակից ծրագիրը կարևորում է ուսումնական փորձառությունը, այսինքն՝ այն միջավայրը և միջոցները, որոնց առնչվում է աշակերտը ուսման ընթացքում: Այդ ընթացքում ստեղծված միջավայրը և կիրառվող միջոցները (դասագիրք, ձեռնարկ, մեթոդներ և այլն) պետք է նպաստեն դասի նպատակների իրականացմանը:

Յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է գիտելիքների ու կարողությունների, կամքի, բնավորության, արժեքային որակների, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների, միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում:

Դասավանդման մեթոդների ճիշտ ընտրության դեպքում՝ պատմության դասաժամերը հնարավորություն են ընձեռում ուսուցչին զարգացնելու սովորողի մտածողությունը և պատմության հանդեպ հետաքրքրությունները:

Ուսումնական ծրագրի բովանդակությունը կազմակերպվում է կոնկրետ բաժինների, գլուխների և թեմաների տեսքով [6]:

Պատմություն առարկայի ծրագրի կազմման հիմքում հիմնականում դրվում է գծային մոդելը, որտեղ պահպանված է ժամանակագրական հաջորդականության սկզբունքը: Ծրագրի կազմման հիմքում շեշտը դրվում է արդի աշխարհում առկա խնդրահարույց թեմաների ուսումնասիրության՝ դրանց պատճառահետևանքային կապերի վեր հանման և քննադատական վերլուծության մեթոդի վրա:

Այսօր կրթական բարեփոխումների հիմնական պահանջներից մեկը դարձել է աշակերտակենտրոն ուսուցումը, անցում է կատարվել գիտելիքակենտրոն համակարգի (գիտելիքների, կարողություններ և հմտություններ, արժեքային համակարգ և դիրքորոշում) և խնդիր է դրվել սովորեցնել սովորել, առաջնային պլան են մղվում այդ խնդիրների լուծմանն ուղղված մեթոդներն ու մեթոդական հնարները[7]:

Դասարանն այժմ դիտվում է որպես աշակերտների հաստատուն համակազմով ինքնակառավարվող փոխգործուն աշխատանքային խումբ, որն ուսուցչի ղեկավարությամբ իրականացնում է ուսուցման ակտիվ գործընթաց:

Դասավանդման ժամանակակից տեխնոլոգիաները, մեթոդները, ուսուցման մոդելները ներառում են ուսուցիչների կողմից օգտագործվող սկզբունքները և մեթոդները խթանող ուսումնական գործընթացը, որոնք կախված են մատուցվող թեմայի

---

6 Ղուկասյան Ա., «Հայոց պատմությունը 8-9-րդ դասարաններում», 2013, էջ 11:

7 Ступина С. Б., Технологии интерактивного обучения в высшей школе, Саратов, 2009. с. 28.

բովանդակությունից և ինչ-որ չափով սովորողի անձնային առանձնահատկություններից: Որպեսզի տվյալ մեթոդը լինի արդյունավետ, այն պետք է սերտորեն առնչվի սովորողի տարիքային առանձնահատկությունների և ուսուցման նյութի հետ:

Յուրաքանչյուր դասի ժամանակ, բնականաբար, ուսուցիչը կատարում է մեթոդի ընտրություն: Ուսուցման մեթոդների ընտրության հիմքում ընկած են դիդակտիկական այն խնդիրները, որոնք լուծվում են դասի ժամանակ, կամ դասի որոշակի փուլում: Մեթոդների ընտրությունը, բացի դասի նպատակից և խնդիրներից, կախված է նաև դասի տիպից ու կառուցվածքից, ուսումնական նյութի բովանդակությունից, աշակերտների տարիքից, պատրաստվածության մակարդակից, հետաքրքրությունից, ժամաքանակից և այլ գործոններից [8]:

Փաստորեն, յուրաքանչյուր իրադրության մեջ կատարելով մեթոդների համապատասխան ընտրություն և դրանց փոխկապակցում՝ պատմության ուսուցիչն ինքն է ընտրում իր մեթոդը և ազատ ու անկաշկանդ կիրառում է այն:

Ստորև ներկայացնում եմ, հիմնականում պատմության ուսուցման գործընթացում դասի կառուցվածքային յուրաքանչյուր փուլի անցկացման ավանդական և ժամանակակից այն մեթոդները, որոնք խթանում են աշակերտների գիտելիքների գործնական կիրառելիությանը, մտահորիզոնի ընդլայնմանը, տրամաբանական և ինքնուրություն մտածողության զարգացմանը, աշակերտների արժեքային համակարգի ձևավորմանը.

- խոսքային մեթոդներ (պատմելը, զրույցը, շարադրանքը և այլն),
- տրամաբանական մեթոդներ (ինդուկտիվ, դեդուկտիվ, անալոգիայի և այլն),
- ճանաչողական-ստեղծագործական մեթոդներ (վերարտադրողական, բացատրական-ցուցադրական, հետազոտական և այլն),
- խմբային աշխատանքի մեթոդներ (մտածիր, զույգ կազմիր, քննակիր, ուսումնական մրցույթ և այլն),
- զննական-ցուցադրական մեթոդներ (նկարազարդումներ, ցուցադրումներ և այլն),
- հետաքրքրությունների խթանման մեթոդներ (ճանաչողական խաղեր, հուզական խթանում և այլն),
- ինտերակտիվ-կառուցողական մեթոդներ (խճանկար, ուսումնական բանավեճ, դերային խաղ, դեպքի ուսումնասիրություն, աշխատանք սկզբնաղբյուրի հետ և այլն),

[8] Котова С. А., Педагогика начального образования. /Учебник для вузов /Под ред. С.А.Котовой. – СПб Питер, 2017. с. 226.

- համագործակցային ուսուցման մեթոդներ (թիմային առաջադիմություն, շրջագայություն պատկերասրահում, խմբային հետազոտություն և այլն):

Մեթոդների ընտրության առաջարկները բազմաթիվ են և դրանց ընտրությունը կատարելիս պետք է հաշվի առնել ոչ միայն թեմայի բնույթը, այլև մատուցվող նյութի՝ աշակերտների կողմից ընկալման մակարդակը: Արդի դպրոցի նորարարական միտումներից մեկը ստեղծագործ մտքի խրախուսումն է, ինչը հնարավոր է դառնում նաև պատմության դասավանդման շրջանակներում:

Կրթության բովանդակության հետ միասին աշակերտների ճանաչողական ունակությունների վրա ներգործում են ուսուցման մեթոդները՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

ԳԼՈՒԽ III.

Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

Ժամանակակից հասարակության մեջ՝ մարդկային գործունեության ընդգրկուն ոլորտում, իր ուրույն տեղն է զբաղեցնում կրթությունը, որի ուղղվածությունից ու արդյունավետությունից են կախված մարդկության զարգացման հեռանկարները:

Կրթության անհրաժեշտությունն ու կարևորությունն անվիճելի է, քանի որ վերջինս պետք է կրթի և ձևավորի այն մարդուն, ով ընդունակ է դիմակայել կյանքի մարտահրավերներին, ով ընդունակ է նոր գիտելիքներ փնտրել, հայթայթել, յուրացնել դրանք և կիրառել ինչպես առօրյայում, այնպես էլ ոչ ստանդարտ իրավիճակներում:

Տարբեր դարաշրջաններում պատմությանն անդրադառնալով և ներկայացված հասարակությունների վարքն ու բարքն ուսումնասիրելով, սովորողները հնարավորություն են ստանում ձևավորելու ավելի լայն աշխարհայացք՝ նկատելու հասարակական հարաբերությունների զարգացումը: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս սովորողների մոտ սերմանել քաղաքացիական այնպիսի վեհ հատկանիշներ, ինչպիսիք են սերը հայրենի հողի, ծնողների և մերձավորի նկատմամբ, պատասխանատվությունը, ազնվության և արդարության համար պայքարը և այլն:

Գիտելիքը, տեղեկացվածությունը հանգեցնում են անձի ինքնաճանաչման, ներքին և արտաքին ազատության, ներանձնային և միջանձնային հարաբերություններում՝ ներդաշնակության: Այս ամենից բխում է, որ կրթությունը իրականացնողների՝ ուսուցիչների վրա մեծ պարտականություն է դրված:

Հիմնական նպատակը կրթությունն այնպիսի մակարդակի բարձրացնելն է, որը երիտասարդ սերնդին հնարավորություն կտա առավելագույն չափով պատրաստ լինել ինքնուրույն որոշումներ կայացնելու, ինքնուրույն կյանքի և ինքնահաստատվելու: Դրա համար անհրաժեշտ է, որ ուսուցիչները ճիշտ բացահայտեն իրենց աշակերտների.

- ուժեղ ու թույլ կողմերը,
- ընդունակությունները,
- տարիքային և անհատական առանձնահատկությունները,
- ուսման նկատմամբ վերաբերմունքը,
- մոտիվացիան,

քանի որ իրենք են ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպիչը:

Անձնային-կողմնորոշված կրթությունը կրթական գործընթացի այնպիսի կազմակերպումն է, որը հիմնվում է սովորողների ու մանկավարժների անձնային

փոխգործակցության վրա՝ ստեղծելով նպաստավոր պայմաններ սովորողների ինքնակրթության, ինքնուրույնության, ինքնորոշման և ինքնաիրացման ունակությունների զարգացման համար:

Ուսուցիչը սոսկ տեղեկույթի կրող և հաղորդող չէ. նա աշակերտների մեջ զարգացնում է ինքնուրույն մտածելու, հսկայածավալ տեղեկատվության մեջ կողմնորոշվելու, մշակելու և դրանք նպատակային ու արդյունավետ օգտագործելու կարողություն: Աշակերտների ինքնուրույն գործունեությունը կարևոր է ինչպես դպրոցում, այնպես էլ կյանքի բոլոր բնագավառներում: Ինքնուրույն աշխատանքի ընթացքում են զարգանում գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները: Ինքնուրույն գործունեության նպատակը նոր սերնդին կյանքին, աշխատանքին նախապատրաստելն է: Ինքնուրույն գործունեության նպատակը բոլոր ժամանակներում որոշվում է հասարակական պահանջներով, գիտատեխնիկական առաջընթացի զարգացումով, ուսումնական հաստատություններով և ուսուցիչների զարգացման մակարդակով: Ինքնուրույն գործունեության նպատակի սահմանման հարցը որքան հին է, այնքան էլ արդիական է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց [9]:

Այսօր առավել կարևոր է ապագա մասնագիտության համար ինքնորոշումը՝ սեփական անձի հնարավորությունների և կարողությունների գիտակցման ճանապարհով: Սովորողների ինքնուրույնության համար անհրաժեշտ նախապայմաններ են հանդիսանում որոշման կայացումը, ներքին ազատությունը, պատասխանատվության գիտակցումը, կայացման ձգտումը, ինչին հնարավոր է հասնել գիտելիքի, մասնագիտության նախընտրության և պահանջարկի համապատասխանությամբ, արժեհամակարգի ձևավորմամբ, մատչելի տեղեկատվության ապահովմամբ և այլն... Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու սպասումները ինչպես տարիքային տարբեր փուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում [10]:

Եթե տեղեկացվածությունը, մասնագիտությունների մասին պատկերացումները բավարար լինեն ինքնորոշման համար, ապա ուսումնական հաստատություններում սովորողները կարող են ինքնուրույն կողմնորոշվել սպասվող հոսքային ընտրության համար, այսինքն կայացնել որոշում՝ որպես ապագա մասնագետ:

---

9 Бордовская Н. В., “Современные образовательные технологии: учебное пособие”, Москва, 2010, с. 226.

10 Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս., Սարգսյան Դ. Յու., Մուրադյան Ե. Բ., «Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում» Երևան, 2017, էջ 7:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հանրակրթական դպրոցում ուսուցանվող ցանկացած ուսումնական բնագավառ՝ սովորողի արժեհամակարգի ձևավորման գործընթացում որոշակի մասնաբաժին ունի: Պատմություն առարկայի արժեհամակարգի բաղադրիչներում առկա են համամարդկային, քրիստոնեական և այլ արժեքներ, ուստի պետք է բացահայտել դրանց իրականացման ճիշտ մեխանիզմներն ու ուղիները:

Որպեսզի պատմություն առարկան յուրաքանչյուր սովորողի համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, յուրաքանչյուր իմացական փորձ:

Բազմաթիվ ստեղծագործություններ քաղաքացիական գիտելիքներից ու որակներից բացի սովորողին հնարավորություն են տալիս մշակել արժեքային այնպիսի որակներ՝ ինչպիսիք են մարդասիրությունը, գթասրտությունը, հանդուրժողականությունը, հարգանքը ուրիշների հանդեպ և այլն: Արժեքային կողմնորոշումն անհատի կառուցվածքի կարևորագույն բաղադրիչն է: Զարգացած արժեքային կողմնորոշումը անհատի հասունության նշան է, նրա սոցիալականության ցուցանիշը:

Այսպիսով, պատմության առարկայի դասավանդումը զարգացնում է աշակերտների ճանաչողական, տրամաբանական, ստեղծագործական մտածողությունը, հաղորդակցման, համագործակցային և ինքնուրույն գործունեության կարողություններն ու հմտությունները, նպաստում է պատմական դեպքերը, երևույթները համեմատելու, համադրելու, վերլուծելու, գնահատելու, ընդհանրացնելու, մարդասիրության, հայրենասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու արժեքային համակարգի ձևավորմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ղազարյան Ա.,«Պատմության առարկան, գործառույթները և հիմնական մեթոդները»**, («Բանբեր Երևանի համալսարանի. Փիլիսոփայություն, Հոգեբանություն»), 2017, № 3 (24), էջ 45-57:
2. **Ղուկասյան Ա., «Հայոց պատմությունը 8-9-րդ դասարաններում»** (Ուսուցչի ձեռնարկ), 2013,88 էջ:
3. **Մանասյան Ն., «Հանրակրթության արժեքային համակարգը»,** («Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր), 2004, N1/2, էջ 6-15:
4. **Պապոյան Վ. Ռ., Գալստյան Ա. Ս., Սարգսյան Դ. Յու., Մուրադյան Ե. Բ., «Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում»**, (Մեթոդական ուղեցույց), Եր., ԵՊՀ հրատ., 2017, 78 էջ:
5. **Փարեմուզյան Ի.**, **«Սովորողների արժեհամակարգի ձևավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում»**, 491 էջ:
6. **Бабанский Ю. К.**, **“Функции осуществления комплексного подхода к воспитанию**”, ("Просвещение"), Москва, 1983, 191 с.
7. **Бордовская Н. В. “Современные образовательные технологии: учебное пособие”.** (кол. авторов; под ред. Бордовской Н.В. М.), Кнорус, 2010, 432 с.
8. **Кон И. С., “Психология старшекласника”,** (“Просвещение”), Москва, 1980, 389 с.
9. **Котова С. А., “Педагогика начального образования”.** (Учебник для вузов, Под ред. С.А.Котовой. – СПб), Питер, 2017, 336 с.
10. **Ступина С.Б., “Технологии интерактивного обучения в высшей школе”,** (Учебно-методическое пособие. Саратов: Издательский центр «Наука»), 2009, 52 с.